ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԾՆՈՂ

Հեղինակավոր ծնողները դրսևորում են վերահսկողության բարձր մակարդակ և երեխային արձագանքման բարձր մակարդակ: Նրանք խրախուսում են երեխայի անհատական պատասխանատվությունը, համաձայն իրենց տարիքային հնարավորությունների

ԾՆՈՂՆԵՐԸ

- պահանջում են երեխաներից իմաստալից վերաբերմունք,
- փորձում են օգնել նրանց՝ ուշադիր լինելով նրանց պահանջներին:

Այնուամենայնիվ վերջին խոսքը միևնույնն է ծնողինն է, որը հիմնվում է տարբերակների քննարկման վրա:

Երեխան կարող է՝

- ներգրավված լինել ընտանեկան խնդիրների քննարկման մեջ,
- մասնակի որոշումներ ընդունելու գործընթացի մեջ,
- լսել, քննարկել ծնողների կարծիքները և խորհուրդները:

Հեղինակավոր ծնողները ջերմ են, հուզական, արձագանքող ոչ միայն երեխայի ֆիզիկական, այլև հոգեբանական կարիքներին: Այս դաստիարակության ներքո մեծացող երեխաները լինում են ազատ, անկաշկանդ, հաջողակ: Նրանք ի վիճակի են որոշումներ կայացնել, գնահատել իրենց կարիքները, ինչպես նաև նպատակին հասնելու ճանապարհին ռիսկային գործոնները :

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists